**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան 10.07.2020թ.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**
**ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**
**թիվ ԳԲՔԱ-LO**-2020/76

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Բողոք բերող՝ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչներ՝ Ա. Թումանյանի, Դ. Արղամանյանի, Ի. Օսիպյանի,
«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի, Գ. Գևորգյանի,
«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Չամսարյանի, Բ. Ավետիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 26.06.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## ՊԱՐԶԵՑ

1. **Գործի նախապատմությունը**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու և անցկացնելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 26.06.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/76 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

01.07.2020թ.-ին և 10.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

01.07.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Գործի քննությունն ավարտվել է 01.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.07.2020թ.-ին:

2. **«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն 26.06.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից վերջինիս կարիքների համար ավտոճանապարհների միջին նորոգման*

*աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:*

*Նշված Ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:*

*Վերոհիշյալ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, ի թիվս 9 այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն և «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն:*

*18.06.2020թ. ժամը 11:00 հրավիրվել է գների շուրջ միաժամանակյա բանակցություններ:*

*Տվյալ ընթացակարգի շրջանակներում 3-րդ չափաբաժնի մասով, բանակցությունների փուլում որպես նվազեցված գին «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է 944 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:*

*Բանակցությունների մյուս մասնակիցները՝ «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի, «Ճանապարհ» ՍՊԸ-ի և «Կապավոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչները բանակցության ընթացքում «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից հստակեցրեցին, թե արդյոք «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից կողմից որպես վերջնական գնային առաջարկ առաջարկվում է 944 000 000 ՀՀ դրամը:*

*«ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից որպես նվազեցված գին «944 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկը հաստատելուց հետո որևէ այլ մասնակից այլ նավեզված գնային առաջարկ չներկայացրեց:*

*Այնուհետև, 18.06.2020թ. ժամը 19:02 www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի արձանագրությունը, որտեղ նշվել է, որ բանակցությունների արդյունքում «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին առաջարկվել է 944 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:*

*Նույն օրը, 18.06.2020թ., www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի շտկված արձանագրությունը, որտեղ նշվել է, որ բանակցությունների արդյունքում «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին արդեն առաջարկվել է 944 900 000 ՀՀ դրամ գնային առաջարկ (տարբերությունը՝ 990 000 ՀՀ դրամ ավել):*

*Ծանոթանալով շտկված արձանագրությանը և «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին ֆիքսված 944 900 000 ՀՀ դրամը, 19.06.2020թ. «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն, «Ճանապարհ» ՍՊԸ-ն և «Կապավոր» ՍՊԸ-ն*

*գրավոր պաշտոնապես դիմեցին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (գրության պատճենները կցվում են)՝ հայտնելով, որ 3-րդ չափաբաժնի մասով «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից կողմից որպես վերջնական գնային առաջարկ առաջարկվել է 944 000 000 ՀՀ դրամը, սակայն արձանագրությունում ֆիքսվել է 944 990 000 ՀՀ դրամը: Նշվածի վերաբերյալ ՍՊԸ-ները խնդրեցին խնդրին ընթացք տալ և բացառել թույլ տված խախտումը:*

*Նշված ոչ մի գրությանը պատասխան չստացվեց:*

*«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 18.06.2020թ. ընդունվեց պայմանագիր կնքելու մասին որոշում, հայտարարությունը նույն օրը հրապարակվեց www.gnumner.am կայքում և սահմանվեց անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:*

*Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:*

*Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:*

*Հրավերի 8.6. կետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝*

*1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային*

*պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:*

*Հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝*

*ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),*

*բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,*

*գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,*

*դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,*

*ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման*

*հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,*

*զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից...:*

*Ինչպես արդեն նշել ենք, նշված Ընթացակարգի շրջանակներում 18.06.2020թ. ժամը 11:00 հրավիրված գների շուրջ միաժամանակյա բանակցությունների ընթացքում 3-րդ չափաբաժնի մասով, բանակցությունների փուլում որպես նվազեցված գին «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է 944 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:*

*Բանակցությունների մյուս մասնակիցները՝ «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի, «Ճանապարհ» ՍՊԸ-ի և «Կապավոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչները բանակցության ընթացքում «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից հստակեցրեցին, թե արդյոք «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից կողմից որպես վերջնական գնային առաջարկ առաջարկվում է 944 000 000 ՀՀ դրամը, որը հաստատվեց վերջինիս կողմից:*

*Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից որպես նվազեցված գին «944 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկը հաստատելուց հետո որևէ այլ մասնակից այլ նավեզված գնային առաջարկ չներկայացրեց:*

*Այնուհետև, 18.06.2020թ. ժամը 19:02 www.gnumner.am կայքում հրապարակվել է ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի արձանագրությունը, որտեղ նշվել է, որ բանակցությունների արդյունքում «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին առաջարկվել է 944 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:*

*Սակայն անհասկանալի պայմաններում նույն օրը, 18.06.2020թ., www.gnumner.am կայքում հրապարակվում է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի շտկված արձանագրությունը, որտեղ նշվում է, որ բանակցությունների արդյունքում «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին արդեն առաջարկվել է ոչ թե է 944 000 000 ՀՀ դրամ, այլ 944 990 000 ՀՀ դրամ գնային առաջարկ (տարբերությունը՝ 990 000 ՀՀ դրամ ավել):*

*Հատկանշական է, որ ծանոթանալով շտկված արձանագրությանը և «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին ֆիքսված 944*

*000 000 ՀՀ դրամը, 19.06.2020թ. «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն, «Ճանապարհ» ՍՊԸ-ն և «Կապավոր» ՍՊԸ-ն գրավոր պաշտոնապես դիմեցին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (գրության պատճենները կցվում են)՝ հայտնելով, որ 3-րդ չափաբաժնի մասով արդյոք «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ից կողմից որպես վերջնական գնային առաջարկ առաջարկվ ել է 944 000 000 ՀՀ դրամը, սակայն արձանագրությունում ֆիքսվել է 944 990 000 ՀՀ դրամը: Նշվածի վերաբերյալ ՍՊԸ-ները խնդրեցին խնդրին ընթացք տալ և բացառել թույլ տված խախտումը:*

*Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նշված ոչ մի գրությանը պատասխան չստացվեց: Ավելին, շարունակվում է ընթանալ նշված ընթացակարգով 18.06.2020թ. հայտարարված անգործության ժամկետը:*

*Գտնում ենք, որ վերոհիշյալի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, մասնակիցների գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, ինչպես նաև Ընթացակարգի հրավերով սահմանված բանակցությունների կազմակերպման կարգը:*

*Վերոհիշյալ նորմերի խախտումներն իրենց հերթին հանգեցրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքի խախտմանը և ՀՀ պետական բնուջեին հասցրել առնվազն 990 000 ՀՀ դրամի վնաս:*

*Նշված խախտումը հնարավոր է վերացնել, իսկ վնասը կանխել՝ բացառապես գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու եղանակով:»:*

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու և անցկացնելու վերաբերյալ:

3. **<u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 26.06.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/9604-2020 գրությամբ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 26.06.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 01.07.2020թ-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 30.06.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ուսումնասիրելով «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 26.06.2020թ գնումների հետ կապված բողոք քննող անձին ներկայացված բողոքը՝ Ձեզ ենք ներկայացնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁ-2020/11Շ ծածկագրով ընթացակարգի (այսուհետ ընթացակարգ) շրջանակներում 18.06.2020թ կայացած գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների (այսուհետ՝ բանակցություններ) մանրամասները:*

*Փաստական հանգամանքներ.*

*1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ավտոճանապարհների միջին նորոգման ձեռքբերման նպատակով 14.05.2020 թվականին կազմակերպվել է թիվ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով գնման ընթացակարգ:*

*2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գնումն իրականացվել է Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ 18.06.2020 թվականին, ժամը 11:00-ին բոլոր բավարար գնահատված մասնակիցները հրավիրվել են գների շուրջ միաժամանակյա բանակցությունների:*

*3. 26.06.2020թ.-ին «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից Ձեզ է ներկայացվել բողոք վերոգրյալ ընթացակարգի վերաբերյալ: Ի պատասխան նշված բողոքի և նրանում մատնանշված «փաստերի» ներկայացնում ենք տեղի ունեցածի շուրջ փաստական*

*հանգամանքներ, որոնք դուրս են մնացել «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերի շրջանակից, և/կամ ներկայացվել են այլ կերպ:*

*4. Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացել էին բավարար գնահատված բոլոր մասնակիցները, սակայն իրականացվող բանակցության ընթացքում ըստ էության բանակցում էին «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ն, «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն և «Շինպյուս» ՍՊԸ-ն:*

*«ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից հնչեցվել է «944» թիվը, և դեռ գնային առաջարկը ամբողջությամբ չհնչեցրած «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն հրաժարվել է բանակցությանը հետագա մասնակցությունից, որից հետո «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ն հնչեցրել է ամբողջական թիվը:*

*Գնային առաջարկը բանավոր հնչեցնելուց հետո մասնակիցներին տրամադրվել է ժամանակ՝ գնային առաջարկը թերթիկներում լրացնելու համար: Այդ պահին մասնակիցներից ներկա են եղել միայն «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ և «Արարատ-Ճանշին» ՍՊԸ, քանի որ մյուս մասնակիցները լքել էին բանակցությունների վայրը: Ընդ որում «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ «944.990.000» թիվը, հնչեցվել է թե՛ լրացման, թե՛ փաստաթղթի ներկայացման պահին: Մասնակիցները գնային առաջարկը լրացնելուց հետո թերթիկները հանձնել են գնման ընթացակարգի քարտուղարին և հեռացել են՝ չսպասելով բանակցությունների ամփոփմանը:*

*Ընդ որում, «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է ավելի վաղ, քան «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, այն հնչեցվել է «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի լիազորված անձի ներկայությամբ, և վերջինս հնարավորություն ուներ իր անհամաձայնությունները բարձրաձայնել և/կամ ներկայացնել կամ վերանայել իր գնային առաջարկը, մինչդեռ վերջինիս կողմից որևէ գործողություն չի կատարվել:*

*Ավելին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից թիվը դեռ գնային առաջարկը ամբողջությամբ չհնչեցրած «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն հրաժարվել է բանակցությանը հետագա մասնակցությունից, հաշվի է առնվել «Արարատ Ճանշին» ՍՊԸ-ի ներկայացուցչի համաձայնությունն առ այն, որ «ԱԱԲ Պրոեկտի» կողմից ներկայացվի վերջնական հնչեցված գնային առաջարկը:*

*Նշենք նաև, որ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի 19.06.2020թ և «Կապավոր» ՍՊԸ-ի 23.06.2020թ կողմից ստացված գրություններին տրվել է պատասխան համապատասխանաբար 25.06.2020թ և 06.06.2020թ (հիմնավորումները կցվում են): Իսկ «Ճանապարհ» ՍՊԸ-ի կողմից գրություն չի ստացվել:*

*«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի այն դիտարկումը, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը «անհասկանալի պայմաններում» շտկվել է և արդյունքում փոխվել է «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում իրականությանը: Արձանագրության շտկման պատճառ է հանդիսացել արձանագրության մեջ տեղ գտած վրիպակը. մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկները չեն փոխարինվել բոլոր չափաբաժինների մասով և արձանագրվել է գնման հայտով ներկայացրած գնային առաջարկները: Նշենք նաև, որ չշտկված արձանագրությունում որպես «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկ է նշվել 1,477,942,830 ՀՀ դրամը և բացակայում է «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից նշված 944,000,000 ՀՀ դրամ արժեքը (կցվում է gnumner.am կայքից 18.06.2020թ ժամը 19:02 հրապարակված արձանագրության ներբեռնած տարբերակը): Նույն օրը՝ ժամը 19:21 gnumner.am կայքում հրապարակվել է արձանագրության շտկված տարբերակը՝ շտկելով մասնակիցների կողմից բանակցություններին ներկայացված նոր գնային առաջարկները (կցվում է gnumner.am կայքից շտկված արձանագրության ներբեռնած տարբերակը): 18.06.2020թ ժամը 20:30 gnumner.am կայքում հրապարակվել է ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվություն, որում հստակ ներկայացված է բոլոր մասնակիցների գնային առաջարկները (կցվում է):*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝*

*«Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»*

*Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ գնումների գործընթացը կազմակերպելիս որպես առաջնորդող սկզբունքներ պետք է ընդունել մասնակիցների իրավահավասարությունը և գործել բոլորի համար հավասար, միասնական կանոններով՝ ապահովելով կողմերի մրցակցությունը և ոչ խտրական վերաբերմունքը որևէ մասնակցի նկատմամբ:*

*Անդրադառնալով վերոգրյալին փաստական հանգամանքների լույսի ներքո ակնհայտ է դառնում հետևյալը՝ այսպես. «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից հնչեցվել է «944»*

*թիվը, և դեռ գնային առաջարկը ամբողջությամբ չհնչեցրած «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն հրաժարվել է բանակցությանը հետագա մասնակցությունից, որից հետո «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ն հնչեցրել է ամբողջական թիվը: Հանձնաժողովը նշված պայմաններում առաջնորդվել է բացառապես գնումների մասին օրենքի սկզբունքներով, ապահովելով խտրականության բացառումը և իրավահավասարությունը: Մասնակցի հնչեցրած թիվը պայմանավորելը այլ մասնակցի բանակցությունից հրաժարվելու պահի հետ չի բխում նշված սկզբունքներից և ստեղծում է խտրական և ոչ իրավահավասար մրցակցություն բանակցության մասնակիցների միջև: Բացի այդ.*

*ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ N 526-Ն որոշման համաձայն՝*

*«40. . . . եթե . . . գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝*

*ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), . . .*

*դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը, . . .»*

*Բողոք բերող կազմակերպությունը, ինչպես արդեն նշվել է, ողջ բանակցության ընթացքում ներկա է եղել, բացառությամբ բանակցությունների ամփոփման պահը: «Արարատ–Ճանշին» ՍՊԸ-ն ներկա է եղել այն պահին, երբ գնային առաջարկ է ներկայացվել «ԱԱԲ Պրոյեկտ» ընկերության կողմից, վերջինիս գնային առաջարկը հնչեցվել է գնային առաջարկը ստանալու պահին, բացի այդ, գնային առաջարկը հնչեցվել է նաև «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից այն լրացնելու ժամանակ, ուստի «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն որևէ կերպ կաշկանդված չէր օգտվելու և իրացնելու իր՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքից: Ընդ որում, ինչպես արդեն նշել ենք, «Արարատ – Ճանշին» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը ներկայացրել է ավելի ուշ, քան «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ-ն:*

*Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, գտնում ենք, որ բանակցությունները իրականացվել են Գնումների մասին ՀՀ օրենքի սկզբունքներին և օրենսդրությանը համապատասխան, ողջ գործընթացը իրականացվել է բացառապես իրավական եղանակով, ուստի խնդրում ենք*

*մերժել «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 26.06.2020թ ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/76 բողոքը:»:*

4. **<u>Երրորդ անձ՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն՝ 01.07.2020թ.–ին ներկայացրած միջնորդության հիման վրա ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձի ներկայացուցիչը, ներկայանալով 01.07.2020թ.-ին հրավիրված նիստին, գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով հայտարարված ընթացակարգում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ճանաչվել է հաղթող:*

*Վերը հիշատակված ընթացակարգի շրջանակներում «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Բողոքաբեր) ներկայացրել է բողոք:*

*Գտնում ենք, որ ներկայացված բողոքը ակնհայտ անհիմն է, այն ներկայացվել է իրավունքի չարաշահման պայմաններում և մեր գնահատմամբ բացառապես նպատակ է հետապնդում կասեցնել գնման գործընթացը: Հետևաբար գտնում ենք, որ բողոքը ենթակա է մերժման, հետևյալ հիմնավորումներով:*

*Գտնում ենք, որ բողոքարկման հանձնաժողովը պահպանելով անկախություն և անաչառություն ներկայացված բողոքը պետք է քննի ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու համար: Տվյալ պարագայում սույն բողոքի քննության համար հանձնաժողովը պետք է պարզի բողոքում նշված փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Մասնավորապես պետք է պարզել, արդյո՞ք բողոքում նշված փաստերը համապատասխանում են իրականությանը, թե ոչ, դրանք ինչպիսի ապացույցներով են հաստատվում կամ հերքվում:*

*Տվյալ պարագայում Բալոքաբերը իր կողմից ներկայացված բողոքում նշել է փաստեր, որոնք չեն համապատասխանում իրականությանը և չեն հաստատվում, որևէ թույլատրելի կամ վերաբերելի ապացույցներով:*

*Նշվածից հետևում է, որ բողոքաբերը պարտավոր է հանձնաժողովին ներկայացնել թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, առ այն, որ www.gnumner.am կայքում*

*հրապարակված շտկված արձանագրության և նույն օրը հրապարակված մեկ այլ արձանագրության մեջ առկա են գնի փոփոխություն, այն չափով, որը նշված է Բողոքաբերի բողոքում:*

*Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք մերժել «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/76 բողոքը.»:*

5. **<u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.05.2020թ.-ին հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ), որը խմբավորված է 3 (երեք) չափաբաժիններում:

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել բողոքաբեր՝ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն, Երրորդ անձ՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն, «Շինպլյուս» ՍՊԸ-ն, «Խաչիար» ՍՊԸ-ն, «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ն, «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն, «Ճանապարհ» ՍՊԸ-ն, «Եվրոպա» ՍՊԸ-ն, «Կապավոր» ՍՊԸ-ն, «Լիլիթ-87» ՍՊԸ-ն և «Սահակյանշին» ՓԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և այն, որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշել է նիստը կասեցնել, էլեկտրոնային ձևով ծանուցել բավարար գնահատված մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ 18.06.2020թ.-ին բանակցությունների հրավիրելու մասին:

iv. Հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ 18.06.2020թ.-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ներկայացել են հրավիրված բոլոր մասնակիցները, բացառությամբ «Եվրոպա» ՍՊԸ-ի և «Բլեսկ» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի:

v. Նույն արձանագրության 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին: Առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում՝ հրավերով սահմանված կարգին համապատասխան: Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

vi. 18.06.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրացույցային օրը ներառյալ:

vii. Ընկերության կողմից բողոքի քննության ընթացքում ներկայացվել է բանակցությանը ներկա մյուս ընկերությունների՝ «Ճանապարհ» ՍՊԸ-ի, «Կապավոր» ՍՊԸ-ի, «Եվրոպա» ՍՊԸ-ի, «Խաչհար» ՍՊԸ-ի, «Լիլիթ-87» ՍՊԸ-ի կողմից կնքված և ստորագրված փաստաթուղթ, համաձայն որի՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն բանակցությունների փուլում որպես 3-րդ չափաբաժնի մասով նվազեցված գին առաջարկել է 944 000 000 ՀՀ դրամ՝ 944 990 000 ՀՀ դրամ գումարի փոխարեն:

viii. Ընկերության ներկայացուցիչը, ով մասնակցություն է ունեցել հրավիրված միաժամանակյա բանակցություններին, բողոքի քննության ընթացքում՝ նիստով հայտնել է, որ վերջինս պատվիրակված է եղել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը նվազեցնել մինչև 944 000 000 ՀՀ դրամ գումարի չափով:

ix. 18.06.2020թ.-ին ժամը 19:02-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ.-ին նիստի թիվ 3 արձանագրությունը:

Նույն օրը՝ արդեն 19:21-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության շտկված տարբերակը:

Հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության սկզբնական տարբերակում՝ հրապարակված www.gnumner.am կայքում ժամը 19:02-ին, «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գնի ընդհանուր չափը ընթեռնելի չէ:

6. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 26.06.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ

կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և

պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման,

օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... *վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը*:

Նույն հոդվածի 5-րդ ենթակետի համաձայն՝ ... *բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:*

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ «*վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը*» ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը

(վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու /փոփոխելու/ նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.05.2020թ.-ին հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին՝ խմբավորված է 3 (երեք) չափաբաժիններում, մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել բողոքաբեր՝ «Արարատ-Ճանշին ՍՊԸ-ն, Երրորդ անձ՝ «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն, «Շինպլյուս» ՍՊԸ-ն, «ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ-ն, «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ն, «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն, «Ճանապարհ» ՍՊԸ-ն, «ԵՎՐՈՊԱ» ՍՊԸ-ն, «ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ն, «Լիլիթ-87» ՍՊԸ-ն և «ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ և 3-րդ կետերի հիման վրա՝ Հանձնաժողովը որոշել է ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ին: Առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում՝ հրավերով սահմանված կարգին համապատասխան: Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և 18.06.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրացույցային օրը ներառյալ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ

դեպքում, Բողոքաբերը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Սույն գործով «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել բողոքով ներկայացրած փաստական հանգամանքների վերաբերյալ վերաբերելի և թույլատրելի ապացույց, այն որ Պատվիրատուի կողմից բանակցությունների ժամանակ թույլ են տրվել Օրենքի և Կարգի դրույթների խախտումներ, որոնք հանգեցրել են գնման ընթացակարգին բանակցային փուլի կազմակերպման կարգի խախտումների կամ մասնակիցների մրցակցության սահմանափակմանն ու խտրականությանը:

Ընկերության կողմից բողոքի քննության ընթացքում ներկայացված՝ բանակցությանը ներկա մյուս ընկերությունների՝ «Ճանապարհ» ՍՊԸ-ի, «Կապավոր» ՍՊԸ-ի, «Եվրոպա» ՍՊԸ-ի, «Խաչհար» ՍՊԸ-ի, «Լիլիթ-87» ՍՊԸ-ի կողմից կնքված և ստորագրված փաստաթղթի հետ կապված Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն որպես բողոքով ներկայացված փաստական հանգամանքների վերաբերյալ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի կարող դիտարկվել, հետևյալ պատճառներից ելնելով.

Նախ «Եվրոպա» ՍՊԸ-ն մասնակցություն չի ունեցել տեղի ունեցած բանակցություններին, որպիսի հանգամանքը նաև չի վիճարկվում բողոքաբեր Ընկերության կողմից: Եվ երկրորդ՝ բողոքով ներկայացված երկրորդ՝ 3-րդ չափաբաժնի մասով բանակցություններ հրավիրելուն և անցկացնելուն պարտավորեցնելու մասին պահանջի բավարարման դեպքում այդ նույն ընկերությունները հնարավորություն են ունենալու մասնակցություն ունենալու բանակացություններին, որպիսի հանգամանքը Բողոքներ քննող անձին թույլ է տալիս եզրակացնելու վերջիններիս կողմից սույն ընթացակարգի ելքով հնարավոր (թեկուզև ենթադրյալ) շահագրգիռ կողմ հանդիսանալու հանգամանքին մասին:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Ընկերության ներկայացուցիչը, ով մասնակցություն է ունեցել հրավիրված միաժամանակյա բանակցություններին, բողոքի քննության ընթացքում՝ նիստով հայտնել է, որ վերջինս պատվիրակված է եղել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը նվազեցնել մինչև 944 000 000 ՀՀ դրամ գումարի չափով, այդպիսով շարունակելով բանակցային փուլը, ինչը վերջինիս կողմից չի կատարվել:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված այն հանգամանքին, որ 18.06.2020թ.-ին ժամը 19:02-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՏԿԵՆ-

ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունը, որտեղ նշվել է, որ բանակցությունների արդյունքում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին առաջարկվել է 944 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ: Սակայն անհասկանալի պայմաններում նույն օրը կայքում հրապարակվել է նույն նիստի շտկված արձանագրությունը, որտեղ նշվել է, որ բանակցությունների արդյունքում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գին արդեն առաջարկվել է ոչ թե է 944 000 000 ՀՀ դրամ, այլ 944 990 000 ՀՀ դրամ գնային առաջարկ (տարբերությունը՝ 990 000 ՀՀ դրամ ավել), ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության սկզբնական ու վերջնական (շտկված) տարբերակների միջև «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով գնային փոփոխություն տեղի չի ունեցել: Այն երկու դեպքում էլ նույնն է արձանագրվել (ինքնարժեք՝ 510 144 600, շահույթ՝ 277 347 066.67): Ընդ որում, Հանձնաժողովի 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության սկզբնական տարբերակում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով որպես նվազեցված գնի ընդհանուր չափը ընթեռնելի չէ:

Համադրելով վերը նշված հանգամանքները Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված սկզբունքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն ապահովել է Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների պահանջների կիրառումը (գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը կայացվել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանմամբ՝ ինչի արդյունքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ապահովվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով

սահմանված սկզբունքների կիրառումը, որպիսի պայմաններում, «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 26.06.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/76 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**